

սարսափին մէջ անհունօրէն պիրկ: Երբեմն գոնջ լերկու-
թեամբ զգուելի գօսացումներ, բորոտ ու թունաժէտ, ո-
րոշ լայնքերու վրայ, մինչեւ որ անդունդ մը փորուի թա-
ղելու այդ պղծութիւնը: Ամէն ինչ վայրաստանին վրայ
ամայի շարժականութեամբ մը կը թրթռայ, քայլի, ինկող
քարի, փախատեայ թռիչի մը իսկ բեկորներովը, որոնք
այդ ատամնաւոր խազխզումներուն ժանիքներէն կը
փշրուին ու «կոծկոծուն» կը շատցնեն իրենք զիրենք: Այդ
պատրանքը զօրաւոր է մա՛նաւանդ շան հաջոցներուն
հետ, որոնք կ'երկննան ու բլուրէ բլուր ցատկելու ատեն
կը ցրցքնուին, ամայութիւնը ողողելով անհանգստու-
թեամբ, անձուկով: Երբեմն շէնք-շնորհք փողրակուած
մարդկային ձայն մը, որ շեփորի մը բխումին նման կը
բրգանայ չերեւցող յատակէ մը ու մեր գլխուն վերել կը
լայնասփռուի:

- Ի՛նչ զարմանալի երկիր է էս, աղբէր ճան...

Մատովս կը հրամայեմ լռութիւնը, վասնզի ճամբան
սկսած է փոխուիլ: Կոպճուտ ու կարծր կածանը, լման ե-
րեսը կազմող մարմարէն հանուած, քանի մը օր առաջ-
ւան անձրեւներէն լուացուած՝ հետզհետէ կը լայննայ,
կը փափկանայ: Դէպի վարերը փորուածը ո՛չ ձորակ է,
ոչ ալ դասական կիրճը: Լայն կքում մը, բունի փրցուած
լերան փէշէն, անցք մը ճարելու համար դէպի դաշտը:
Այս կքումն է, որ ժամանակին հետ վերածուեր է ճամբու,
դէպի ցանուցիր գեղերը դաշտավայրին: Էշերու սուր
սողոցուկը, իրարու արձագանգող իրենց գալարափո-
ղերէն միջոցը կը լեցնէ ընտանի ու բնական բարեխառնու-
թեամբ մը, որ աշխատուած, մարդացած վայրերը կը զատէ
անհուպ ամայքներուն կարծր, յոգնեցնող ու անխմաստ
պատկերէն: Ծուներ, որոնց կաղկանձը օդը կը կոծէ՝ աշ-
նային տրտմութիւններ սահեցնելով հասած այգիներուն
ոգիովը արդէն ջերմացած սիրտերէ ներս, երբ կեանքը
պահ մը կը փոխադրուի այդ բլուրները ու ամէն թուզի
ծառին տակ (որ այգիին մէջ անհրաժեշտութիւն մըն է,
դուք գիտէք պատճառը այդ խորհրդաւոր մերձեցում-